Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2017 թվականի մայիսի 12-ի նիստում,
արձանագրություն N 8,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ. Լ. Աթոյան
«12» _____ 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԳ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Որակի ապահովումը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) ռազմավարական կարևորագույն նպատակներից է: Որակի ապահովման գործընթացում պետք է ընդգրկվեն կրթության բոլոր շահակիցները՝ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին:

2. Շահակիցները համալսարանի գործունեությանն առնչվող շահագրգիռ կողմերն են:

3. Ներքին շահակիցներն են՝ համալսարանի աշխատակիցները և ուսանողները: Հիմնական արտաքին շահակիցներն են՝ պետությունը, գործատուները, շրջանավարտները, դիմորդները և շահագրգիռ այլ կողմեր:

4. Հաշվի առնելով շահակիցների աճող թիվը՝ համալսարանը նպատակ ունի խորացնելու արտաքին և ներքին շահակիցների հետ կապերը՝ միաժամանակ նպաստելով համալսարանի ռազմավարության իրականացմանը: Համալսարանն իր գործունեության շրջանակներում կարևորում է ներքին և արտաքին շահակիցների հետ համագործակցությունը, որը հնարավորություն կտա ոչ միայն բարելավելու կրթական ծառայությունների որակը, այլև բարձրացնելու համալսարանի կերպարը և վարկանիշը:

5. Որակի ապահովման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման ժամանակ համալսարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ կրթությունը հանրային բարիք է, և արտաքին միջավայրի վերափոխման արդյունքում փոփոխվում են նաև շահակիցների՝ բարձրագույն կրթությանը ներկայացվող պահանջները: Արտաքին միջավայրի վրա ազդեցությունն ու փոփոխությունները տեղի են ունենում հիմնականում աշխատաշուկայի պահանջների փոփոխությունների և կրթական շուկայում մրցակցության ուժգնացման արդյունքում:

II. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

6. Ներքին և արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականությունը սահմանում է այն հիմնական սկզբունքները, մոտեցումները և ձևերը, որոնցով համալսարանն առաջնորդվում է շահակիցների ներգրավման և նրանց կարիքների բացահայտման գործընթացում:

7. Սույն քաղաքականությամբ առաջնորդվելիս համալսարանը ձգտում է շահակիցների ներգրավման միջոցով նպաստելու համագործակցության ձևավորմանը և այդ համագործակցության արդյունքում բարելավելու կրթական ծառայությունների որակը:

III. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8. Համալսարանի որակի ապահովման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման նպատակն է որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետ գործարկումը, համալսարանում տեղի ունեցող բոլոր գործընթացների շարունակական բարելավումը և որակի մշակույթի ձևավորումը:

9. Որակի ապահովման գործընթացում շահակիցների ներգրավումը ենթադրում է որակի ներքին ապահովման բոլոր փուլերում նրանց մասնակցությունը, այն է՝ պլանավորում և փաստաթղթավորում, իրականացում, գնահատում և բարելավում:

10. Որակի ապահովման գործընթացում շահակիցների ներգրավման ենթանպատակներն են՝

1) մասնագիտության կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման գործընթացում շահակիցների մասնակցության ապահովում.
2) ուսանողակենտրոն մոտեցման կիրառում ու տարածում.
3) կրթական ծառայությունների որակի բարելավում.
4) մասնագիտությունների նոր ուղղությունների զարգացում.
5) կրթության ոլորտում առկա լավագույն փորձի ներդրում համալսարանում.
6) շրջանավարտների ծառայողունակության բարձրացում.
7) միջազգայնացում.
8) ենթակառուցվածքների բարելավում.
9) շահակիցների կարիքների վերհանում և համալսարանի գործունեության բարելավում.
10) ֆինանսավորման աղբյուրների բազմատեսակացում:

11. Շահակիցների ներգրավվածության ապահովման գործուն կառուցակարգերի առկայությունը համալսարանի կառավարման համակարգի կատարելագործման կարևորագույն և անհրաժեշտ հիմքերից է:

12. Հետադարձ կապն այս գործընթացում ապահովում է բոլոր շահակիցների և ներգրավված կողմերի հետ փոխազդեցության մեխանիզմը: Հետադարձ կապի իրականացումը հանգեցնում է տարբեր օղակներում կառավարման մարմինների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը:

13. Որակի ապահովման գործընթացում շահակիցների ներգրավման արդյունքում ստացված տեղեկատվությունն օգտագործվում է համալսարանի քաղաքականությունների և ընթացակարգերի հստակեցման, ինչպես նաև ռազմավարական և գործառնական պլանավորման նպատակով:

IV. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

14. Համալսարանում գործում են որակի ապահովման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման հետևյալ սկզբունքները՝

1) հասանելիություն. ապահովել մասնակցության այնպիսի մեխանիզմներ, որ այդ գործընթացում հնարավոր լինի ներգրավել բոլոր շահակիցներին.
2) հաշվետվողականություն. համալսարանի գործունեության վերաբերյալ պետք է պարբերաբար պատշաճ հաշվետվություններ ներկայացվեն համապատասխան մակարդակի կառավարման մարմինների կողմից.
3) արդարացիություն. պետք է պահպանել արդարացիությունը ներգրավված կողմերից բոլորի նկատմամբ.
4) հրապարակայնություն. ապահովել համալսարանի ներքին և արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականության և ընթացակարգերի հրապարակայնությունը բոլոր ներքին և արտաքին շահակիցների համար:

V. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

15. Ներքին և արտաքին շահակիցներին որակի ապահովման գործընթացում ներգրավման հիմնական մոտեցումներն են՝

1) համագործակցություն, որը ենթադրում է շահակից կողմերի ներգրավվածություն, որոշումների համատեղ կայացում և գործողությունների իրականացում.
2) մասնակցություն՝ շահակիցները ներգրավված են աշխատանքային, փորձագիտական խմբերում, հանձնաժողովներում առանձին հանձնարարություններ կատարելու կամ գործունեության առանձին ոլորտում գործառույթներ իրականացնելու նպատակով.
3) խորհրդատվություն, որը ենթադրում է սահմանափակ ներգրավվածություն, քանի որ շահակիցները տրամադրում են խորհրդատվություն այն հարցերի շուրջ, որոնք առաջ են քաշվում համալսարանի կողմից: Տրված խորհրդատվությունն ըստ հայեցողության և (կամ) հիմքերի առկայության դեպքում կարող է հաշվի չառնվել համալսարանի գործունեության բարելավման մեջ.
4) տեղեկատվության տրամադրում շահակիցներին, որի դեպքում համալսարանը տեղեկատվություն է տրամադրում բոլոր շահակիցներին կամ շահակիցների առանձին թիրախային խմբերին տարբեր ուղիներով, օրինակ՝

պաշտոնական կայքի միջոցով, էլեկտրոնային փոստով, նամակներով, բրոշյուրներով, տպագրված նյութերի տրամադրմամբ և այլ կապուղիներով:

VI. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

16. Համալսարանը որակի ապահովման գործընթացում կարևորում է ներքին շահակիցների ներգրավումը կրթական ծառայությունների որակի անընդհատ բարելավման և որակի մշակույթի ձևավորման նպատակով:

17. Համալսարանի ներքին շահակիցներն են՝ ուսանողները, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը:

18. Համալսարանն իր ռազմավարությանը համաձայն՝ կարևորում է ուսանողակենտրոն մոտեցման կիրառումը և ամրապնդումը:

19. Ուսանողներին որակի ապահովման գործընթացում ներգրավման ձևերն են՝

1) ներգրավումը մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման գործընթացում.
2) ուսումնառության և դասավանդման վերաբերյալ պարբերաբար հարցումների անցկացումը.
3) ներգրավումը որակի ապահովման ուսանողների փորձագիտական խմբում, որի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է համապատասխան փաստաթղթերով.
4) ինքնավերլուծության գործընթացում ուսանողների պարտադիր մասնակցությունը.
5) համալսարանի ղեկավար մարմինների և (կամ) վարչական անձնակազմի հետ պարբերաբար հանդիպումներին մասնակցությունը:

20. Համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ներգրավումը որակի ապահովման գործընթացում իրականացվում է հետևյալ ձևերով՝

1) ներգրավումը մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացում.

2) համալսարանի գործունեության արդյունքների վերաբերյալ պարբերաբար հարցումների անցկացում.
3) ներգրավումը որակի ապահովման փորձագիտական խմբում: Փորձագիտական խմբի ձևավորման կարգը, գործառույթները, հաշվետվողականությունը, փորձագետների նկատմամբ պահանջները սահմանված են համապատասխան փաստաթղթերով.
4) ներգրավումը աշխատանքային խմբերում և հանձնաժողովներում.
5) ինքնավերլուծության գործընթացում մասնակցությունը.
6) համալսարանի ղեկավար մարմինների հետ պարբերաբար հանդիպումներին մասնակցությունը և այլն:

VII. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՁԵՎԵՐԸ

21. Համալսարանը կարևորում է արտաքին շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացում:

22. Արտաքին շահակիցներն են՝ պետությունը, շրջանավարտները, գործատուները, դիմորդները, գործընկերները և շահագրգիռ այլ կողմեր:

23. Որակի ապահովման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավման ձևերն են՝

1) ներգրավումը մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման գործընթացում հարցումների, հանդիպումների և այլ ձևերով.
2) շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքի պաշտպանություն) հանձնաժողովներում մասնակցությունը.
3) համալսարանի նախաձեռնությամբ ուսանողների մասնակցությունը ընթացիկ և կիսամյակային գնահատման գործընթացում.
4) համատեղ իրականացվող ծրագրերում, գիտահետազոտական և այլ աշխատանքներում ներգրավումը,
5) փորձառության, վերապատրաստումների անցկացումը և այլն: